Վեհափառ Հայրապետը ի նկատի ունենալով Զաւէն վարդապետի վերջին ամիսների անկարգ արարքները և ժխտումը իր անպայմանաւոր հնազանդութեան վանական ուխտի, համաձայն մեր Եկեղեցու կարգ ու կանոնի, ընթացք տուեց Գ. Հ. Խորհուրդի որոշմանը և 5 Յուլիս 1990-ի հայրապետական վճռով տնօրինեց Զաւէն վարդապետ Խաչատրեանի նկատմամբ փիլոնազրկումի կանոնական պատիժ մի տարուայ ժամկէտով, յոյս ունենալով որ նա կ'անդրադառնայ իր անկարգ ընթացքին և զղջումով կը ներկայանայ Ս. Էջմիածին, վերականգնելու համար իր հոգևոր ու բարոյական վիճակը իբրև միաբան Մայր Աթոռի: Մինչ այդ, իբրև փիլոնազուրկ հոգևորական, նա զրկուած է որևէ կրօնական-եկեղեցական պաշտօն կամ ծիսական արարողութիւն կատարելու իրաւունքից:

ԴԻՒԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ

Ս. Էջմիածին,
9 Յուլիս 1990 թ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՎՃԻՌ

Այսու կը հաստատենք, փիլոնազրկումի Մեր 9 Յուլիս 1990 թուակիր որոշումը Տ. Զաւէն վարդապետ Խաչատրեանի վերաբերեալ, իբրև հետևանք անպայմանաւոր հնազանդութեան նրա վանական ուխտի դրժումի և անկարգ ընթացքի: Ստացած լինելով նրա նոր անիրաւ գրութիւնը՝ 20 Սեպտեմբեր 1990 թուակիր, որով նա համարձակւում է ժխտել՝ Մեր իշխանութեան ներքոյ գործող Մայր Աթոռիս հայրապետահաստատ Գերագոյն Հոգևոր Խորհրդի հեղինակութիւնը, Մենք ցաւօք վերջնապէս յուսահատուեցինք նրանից, իբրև անուղղելի անձ, և Մեր հայրապետական վճռով կարգազրկում ենք նրան, որով նա ընդմիշտ հեռացւում է Հայ Առաքելական Եկեղեցու ծառայութիւնից և դաւում աշխարհականաց շարքը իր նախկին Վահան Խաչատրեան անունով:

ՎԱԶԳԷՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
10 Հոկտեմբեր 1990 թ.